Հաստատում եմ

Տնօրեն Ն. Գասպարյան

ԿԱՐԳ

ՄԻՋԻՆ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ

ԿԱՐԳ

Ուսումնամեթոդական խորհրդի գործունեության և իրավասության

Ընդհանուր դրույթներ

Ուսումնամեթոդական խորհուրդը կոլեգիալ սկզբունքով գործող մարմին է, որը քննարկում է քոլեջի առաքելության ու նպատակների որակյալ իրականացման գործում ուսումնամեթոդական հենքին առնչվող հարցերն ու խնդիրները:

Խորհրդի ձևավորումը

Ուսումնամեթոդական խորհուրդը ձևավորվում է մանկավարժական խորհրդի թիվ 1 նիստում, գործում է 1 ուսումնական տարի, նիստերը գումարվում են ուս.տարվա մեջ 3-4 անգամ, անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ:

Խորհրդի կազմում ներգրավվում են հիմնականում ամբիոնների վարիչները, փորձառու դասախոսները, տնօրենի տեղակալները, բաժնի վարիչները, մեթոդիստը, ՈՆԱԿ-ի պատասխանատուն, ուսանողներ: Նախագահում է ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, որն ընդունած որոշումները ներկայացնում է տնօրինական կամ մանկավարժական խորհուրդներում, տնօրենի երաշխավորությամբ՝ Կառավարման խորհրդին:

Գործունեությունը և իրավասությունը

- Իրականացվող ՄԿԾ-ների ուս.պլանների վերանայում
- Ուսումնական ծրագրերի /առարկաների և մոդուլների/ վերանայում
- Նոր ՄԿԾ-ների ներդրում
- Նոր ուսուցման ձևերի ներդրում
- Ուսուցման նոր տեխնոլոգիաների ներդրում
- Ուսումնամեթոդական համալիրների ստեղծում /անհատական, ամբիոնների, ըստ պարապմունքների, ըստ թեմաների, ըստ արդյունքների/
- Դասախոսների մասնագիտական աճին նպաստող միջոցառումների նախաձեռնում
- Միջամբիոնային կապերի ամրապնդում և կորպորատիվ մշակույթի ձևավորում
- Աշխատանքային առաջավոր փորձի փոխանակում
- Ուսումնամեթոդական ուղեցույցերի, ձեռնարկների, տեխնոլոգիական քարտերի կազմում
- Արդիական, գիտական արժեք ներկայացնող հոդվածների, նորույթների, ստեղծագործական աշխատանքների, տեղեկատվության քննարկում, տպագրության հանձնելու երաշխավորում
- Դասախոսների և ուսանողների հետազոտական աշխատանքների ծավալում
- Որակի մշակույթի ձևավորում

- Դասախոսների, ուսումնառողների խրախուսում, մասնակցության ապահովում մասնագիտական օլիմպիադաներին, փառատոներին, համաժողովներին
- Միջանկյալ և ամփոփիչ պետական ատեստավորման ծրագրերի վերանայում
- Դասախոսների ատեստավորման գործառույթներում դասախոսի գործունեության ուսումնաձրագրային և մանկավարժամեթոդական աշխատանքները ներկայացնող փաթեթների կազմում
- Ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության գնահատում
- Ուսումնաարտադրական աշխատանքների գնահատում
- Ամբիոնների գործունեության արդյունքների քննարկում և գնահատում